ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք գ. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 2019թ. N 521-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՍՏԻՃԱՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՆԱՊԱՏԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ այգետնակն ու հենապատերը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, այգետնակը, օժանդակ շինությունը, աստիճաններն ու հենապատերը կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2019 թվականի դեկտեմբերի 25-ին տրված NՀ-21749 արխիվային տեղեկանքը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Սամվել Մնացականի Սողոյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Արովյանի շրջանի Նուռնուս այգետարածքի թիվ 16 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շինարար թաղամաս 1-ին փողոց 16:

2.Սամվել Մնացականի Սողոյանին (ծնված՝ 1959 թվականի դեկտեմբերի 25-ին) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի

մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շինարար թաղամաս 1-ին փողոց 16 (ծածկագիր՝ 07-051-0156-0028) հասցեի 0.0500 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 142.9 քմ արտաքին (108.8քմ ներքին) մակերեսով այգետնակը, 4.6 քմ արտաքին (3.2 քմ ներքին) մակերեսով օժանդակ շինությունը, 1.6 քմ արտաքին մակերեսով աստիճաններն ու ընդհանուր 4.7 քմ մակերեսով հենապատերը ճանաչել օրինական:

3.Սամվել Մնացականի Սողոյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 4092 (չորս հազար իննսուներկու) դրամ՝ 2019 թվականին կառուցված 4.6 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինության ու 1.6 քմ մակերեսով աստիճանների օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարի չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «Տիգրան Լևոնյան» անհատ ձեռնարկատիրոջ տված ընդհանուր 0.0500 հեկտար մակերեսով վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

6.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 30
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2020թ. N 01-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 6-ՐԴ ՇԵՆՔ ԹԻՎ 31 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ, 55-րդ կետերի և հիմք ընդունելով բնակարանի առքուվաճառքի պայմանագիրն ու Սարգիս Ջելիմխանի Սերոբյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետություն մարզ Կոտայք համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 6-րդ շենք թիվ 31 բնակարանի (ծածկագիր՝ 07-003-0031-0001-019-031) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 6 շենք 31 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հունվարի 09
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք գ. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2020թ. N 02-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՄԵՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասի, Աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Մերի Կարապետյանի 2020 թվականի հունվարի 10-ի դիմումն ու 2020 թվականի հունվարի 10-ի գրավոր համաձայնագիրը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի խորհրդական Մերի Կարապետյանին 2020 թվականի հունվարի 10-ից ազատել պաշտոնից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հունվարի 10
գ. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2020թ. N 03-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասի, Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 75-Ա որոշումը և Մերի Կարապետյանի 2020 թվականի հունվարի 10-ի դիմումը՝ որոշում եմ.

1.Մերի Կարապետյանին 2020 թվականի հունվարի 10-ին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարի պաշտոնում:

2.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Մերի Կարապետյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՅԱՆ

2020թ. հունվարի 10
ք. Բյուրեղավան